ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի մարտի 11-ի թիվ 5 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57»

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի **Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար լաբորատոր սարքերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ տրամադրված պարզաբանումները.

Հարցադրում N 7 (10 մարտի 2025թ.)՝ «Հարգելի՛ գործընկեր, խնդրում եմ հնարավորինս մանրամասն ինֆորմացիա տրամադրել 17-րդ չափաբաժնով պահանջվող Ֆայբերի հավասարեցման համակարգի վերաբերյալ: Կիրառման ոլորտը, նպատակը, լրակազմը և այլն»**:**

Պարզաբանում N 7 (11 մարտի 2025թ.)՝ «Հարգելի՛ մասնակից, տեղեկացնում եմ.
Ֆայբերի հավասարեցման/կարգավորման համակարգը կիրառվում է ֆայբերի (օպտիկական մանրաթել) հավասարեցման/կարգավորման համար՝ ֆայբերից ֆայբեր կամ լազերից ֆայբեր լույսի արդյունավետ փոխանցման համար, որը ենթադրում է միկրոմետրական ճշտությամբ կարգավորում: Այն ունի 3 առանցքներով շարժման և անկյունների կարգավորման հնարավորություն, յուրաքանչյուր ուղղությամբ այնպես, ինպես նշված է տեխնիկական բնութագրում՝ ներառյալ առանցքների և անկյունների շարժման/փոփոխման միկրոմետրական պտուտակները և/կամ ակտուատորները: Պետք է լինի մետրական չափողականության: Մնացած բոլոր անհրաժեշտ կետերը նշված են տեխնիկական բնութագրում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/57» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Այվազյանին:

Հեռախոս՝ 060 710 009:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@ysu.am: